ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 հուլիսի 2020 թվականի թիվ 243-Ա

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԳՈՏԻՆԵՐՈՒՄ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԼԱՐՎԱԾՈՒԹՅԱՄԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 1796-Ն որոշման 1-ին հավելվածի 1-ին կետով

որոշում եմ

1. Ստեղծել հանձնաժողով՝ մարզի սահմանային գոտիներում իրավիճակի լարվածությամբ պայմանավորված խնդիրներին արձագանքելու համար, հետևյալ կազմով.

Հանձնաժողովի նախագահ, հանձնաժողովի աշխատանքները համակարգող - Թ. Ստեփանյան - ՀՀ Տավուշի մարզպետի տեղակալ

Ոլորտային հանձնախմբերի, ենթահանձնախմբերի և պատասխանատուների ցանկ.

1)Կազմակերպչական հարցերով պատասխանատու - Արման Գևորգյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի գլխավոր քարտուղար
2)Սոցիալական հանձնախմբի ղեկավար - Ֆելիքս Ափինյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի գլխավոր քարտուղարի տեղակալ
3)Ապրանքանյութական հանձնախմբի ղեկավար - Մերուժան Հարությունյան - ՀՀ Տավուշի մարզպետի օգնական
4)Առողջապահության հանձնախմբի ղեկավար - Արբակ Գրիգորյան - ՀՀ Տավուշի մարզպետի խորհրդական
5)Դիմակայունության (քաղաքաշտպանություն) հանձնախմբի ղեկավար - Նիկոլայ Գրիգորյան - ՀՀ Տավուշի մարզպետի խորհրդական
ա. Տարհանման ենթահանձնախմբի ղեկավար - Արթուր Վանեսյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ

բ. Պատսպարման ենթահանձնախմբի ղեկավար - Վլադիմիր Խառատյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության ավագ մասնագետ

6)Ֆինանսական հանձնախմբի ղեկավար - Ասքանազ Բաբլումյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի ֆինանս. և սոց. տնտ. վարչ. ֆինանսատնտեսագիտական բաժնի վարիչ

7)Շինարարական հանձնախմբի ղեկավար - Տիգրան Մուշեղյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի քաղաքաշին. վարչության պետի պաշտոնակատար

ա. Բարեկարգման (կոմունալ) ենթահանձնախմբի ղեկավար - Արմեն Ճաղարյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի քաղաքաշինության վարչության ավագ մասնագետ

8)Կրթության (երեխաներ) հանձնախմբի ղեկավար - Մանե Ղազումյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պաշտոնակատար

9)Համայնքային հսկողության հանձնախմբի ղեկավար - Հայկ Փաշինյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի բաժին վարիչ

10)Տրանսպորտային (լոգիստիկ) հանձնախմբի ղեկավար - Արտակ Սարգսյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի վարիչ

11)Ներքին կարիքների ապահովման հանձնախմբի ղեկավար - Նունուֆար Հակոբյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի վարչատնտեսական բաժին գլխավոր մասնագետ

12)Գործավարության հանձնախմբի ղեկավար – Անի Մելիքսեթյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի քարտուղարության պետի ժ/պ

13)Հանրային կապերի հանձնախմբի ղեկավար - Լիլիթ Սարգսյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի փորձագետ

ա. Լրատվության մոնիտորինգի ենթահանձնախմբի ղեկավար - Սոֆյա Վերանյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի գլխավոր մասնագետ

2. Հանձնաժողովին.

1) Յուրաքանչյուրը պատասխանատու է իրեն ամրագրված ոլորտում կատարվող աշխատանքների, ինչպես նաև առաջացած խնդիրների բացահայտման, հաշվառման, համակարգման, արձագանքման և որպես վերջնարդյունք՝ լուծման հնարավոր տարբերակների առաջարկման համար

2) 24-ժամյա պարբերականությամբ ներկայացնել հաշվետվություն՝ սույն որոշման հավելված 1-ով սահմանված ձևաչափին համապատասխան:

Հ. ՉՈԲԱՆՅԱՆ